ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնք, գ. Դաշտադեմ,
հեռ. 077-42-03-09

«17» փետրվարի 2017թ
Ե/ 016-17

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ_Ն՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Դաշտադեմ համայնքի ավագանու 14.02.2017թ թիվ 04-Ն որոշումը :

Առդիր 2 թերթ:

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ծ. ԹՈՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնք, հասցե գ.Դաշտադեմ
հեռախոս 077-42-03-09

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » փետրվարի 2017 թվականի N 04- Ն

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Դաշտադեմ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դաշտադեմ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Դաշտադեմ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱՂԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
ԹՈՒՄԱՍՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ			
ԽՌՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՏԻՐԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆ			
ՔՈՍՅԱՆ ՄԵԽԱԿ			

Դաշտադեմ համայնքի ղեկավար՝ Մ.Խոոյան

Հավելված N2

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնքի ավագանու 2017 թվականի
փետրվարի 14-ի թիվ 04-Ն որոշման

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմ համայնքի ավագանու կողմից հաստատված 2013թվականի փետրվարի 21-ի «Դաշտադեմ համայնքի 2013-2016թթ սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշմամբ ներկայացված ծրագրերը մասամբ իրականացվել են:

1.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ:

Ծրագրի առաջին մասը որը վերաբերվում էր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերին իրականացվել են: Այդ հողերի մեծամասնությունից սեփականատերերը կամավոր հրաժարվել էին, սակայն այդպես էլ մնացել էին սեփականատիրոջ անունով : Այս ընթացքում մեզ հաջողվեց այդ հողերը ճանաչել համայնքային սեփականություն և բազայում կատարել բավականին ճշտումներ:

Ծրագիրն իրականացվել է համայնքապետարանի միջոցների հաշվին:

2.ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:

Այս ծրագիրը իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կազմակերպության կողմից:

3. ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:

Այս ծրագիրը չի հաջողվել իրականացվել, քանի որ համայնքապետարանը չունի բավարար ֆինանսական միջոցներ:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐ Թ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ